Հուշաթերթ ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամի համար

Նախատեսված է այն ընտրական տեղամասերի համար, որտեղ քվեարկությունն անցկացվում է էլեկտրոնային միջոցների կիրառմամբ

Վրաստանի Խորհրդարանի 2024 թվականի հոկտեմբերի 26-ի ընտրություններ

Տվյալ ռեսուրսը պատրաստվել է ՀԻԻԱ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսումնական կենտրոնի կողմից:

Հուշաթերթ-հրահանգը օժանդակ ռեսուրս է հանձնաժողովի անդամի կողմից իր գործառույթին համապատասխան ընտրողին որակյալ ծառայություն տրամադրելու համար:



Մինչ քվեարկության մեկնարկը հանձնաժողովի նախագահը Ձեզ կփոխանցի.

- Ընտրողների ստուգման սարք։ Հանձնաժողովի նախագահը անհատական կոդի մուտքագրմամբ սարքի մեջ բացում է ստուգման գործընթացը։

Ստուգման գործընթացը բացելուց և սարքից նախնական հաշվետվությունն արտացոլող կտրոնը տպելուց հետո (այդպիսով հաստատելով, որ սարքով ընտրողներ չեն ստուգվել), հանձնաժողովի նախագահի ցուցումով գրանցում իրականացնողներից մեկը ստուգման սարքից տպում է ընտրողների ցուցակը։

Տեսե՛ք՝ Սխեմա N1. Սարքից ընտրողների ցուցակը տպելու գործընթացի նկարագրություն։

- 50 հատ քվեաթերթիկ։ Ստուգե՛ք կապոցի մեջ քվեաթերթիկների թվի ճշգրտությունը և հանձնաժողովի նախագահի հետ ստորագրությամբ հաստատե՛ք հանձնման-ընդունման ակտում,
- քվեաթերթիկը լրացնելու հատուկ նշիչ (ընտրողին քվեաթերթիկը լրացնելու կարգը բացատրելու գործընթացում քվեաթերթիկի վրա ընտրողի կողմից փորձնական շրջանը գունավորելու համար),
- քվեարկության համար նախատեսված հատուկ շրջանակ-ծրարներ,
- նշմարման հեղուկ,
- գրիչ (ստուգող սարքից տպված ընտրողի ստուգումը հաստատող կտրոնի վրա ընտրողի ստորագրությունը արձանագրելու նպատակով),
- ընտրողների ստուգման կտրոնները տեղադրելու համար հատկացված կապարակնքված անթափանց տուփ։ Տուփը ստանալը ստորագրությամբ հաստատե՛ք գործավարության մատյանում։

Քվեարկությունն սկսելուց հետո ստուգող սարքի կիրառմամբ ընտրողին տրամադրե՛ք ընտրողների գրանցման և այնուհետև քվեաթերթիկների տրամադրման ծառայություն

I. Ընտրողների գրանցման գործընթացը ներառում է հետևյալ բաղադրիչները.

1. Ստուգման սարքում ընտրողի տվյալների որոնում և սարքում բեռնված ընտրողների ցուցակի տվյալների հետ համապատասխանության հաստատում
2. Ընտրողի նշմարում
3. Ստուգող սարքից ընտրողի ստուգումը հաստատող կտրոնի տպում և կտրոնի ստորագրում ընտրողի կողմից։

II. Ընտրողին քվեաթերթիկ տրամադրելու գործընթացը ներառում է հետևյալ բաղադրիչները.

4. Քվեաթերթիկը լրացնելու և քվեաթերթիկը հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղելու կարգի բացատրություն:

5. Ընտրողի կողմից քվեաթերթիկի վրա փորձնական շրջանի գունավորում

6. Ընտրողին հատուկ շրջանակ-ծրարի մեջ դրված ընտրական քվեաթերթիկի փոխանցում

I. Ընտրողի գրանցման ընթացակարգը.

- Խնդրե՛ք ընտրողին ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ:
- Ընտրողը մասնակցում է քվեարկությանը, եթե ներկայացնում է անձը հաստատող փաստաթղթերից որևէ մեկը.
  - ✓ Վրաստանի քաղաքացու էլեկտրոնային անձը հաստատող փաստաթուղթ,
  - ✓ Վրաստանի քաղաքացու ոչ էլեկտրոնային անձը հաստատող փաստաթուղթ (որը չունի տեղեկությունների էլեկտրոնային կրիչ)
  - ✓ Վրաստանի քաղաքացու անձնագիր:
- Ստուգե՛ք անձը հաստատող փաստաթղթի գործողության ժամկետը: Վրաստանի քաղաքացու անձը հաստատող ոչ էլեկտրոնային փաստաթուղթ ներկայացնելու դեպքում ստուգե՛ք անձը հաստատող փաստաթղթի տրման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը:

Ուշադրությո՛ւն:

Եթե ընտրողը ներկայացնում է ժամկետանց անձը հաստատող փաստաթուղթ կամ ուժը կորցրած Վրաստանի քաղաքացու անձը հաստատող ոչ էլեկտրոնային վկայական (ուժը կորցրած է մինչև 2011 թվականի հուլիսի 27-ը ներառյալ տրված ոչ էլեկտրոնային վկայականը), նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը: Ընտրողին բացատրե՛ք քվեարկությանը մասնակցությունը մերժելու պատճառը և նշե՛ք, որ նրան քվեարկությանը մասնակցելու իրավունք կտրվի, եթե նա ներկայացնի գործող անձը հաստատող փաստաթուղթ:

- Ստուգե՛ք ընտրողի դեմքի և ներկայացված փաստաթղթում առկա լուսանկարի համապատասխանությունն իրար:

- Որոնե՛ք ընտրողի տվյալները ընտրողների ստուգման սարքում.
  - ✓ Ընտրողի կողմից էլեկտրոնային անձը հաստատող վկայական (ID քարտ) ներկայացնելու դեպքում, ընտրողի վկայականը ներմուծե՛ք ստուգման սարքի ընթերցիչի մեջ (MRZ)։

  - ✓ Ընտրողի կողմից Վրաստանի քաղաքացու ոչ էլեկտրոնային (այսպես կոչված լամինացված) անձը հաստատող վկայական կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր ներկայացնելու դեպքում ստուգման սարքում ընտրողի տվյալները որոնե՛ք «ձեռքով որոնում» կոճակի կիրառմամբ և ընտրողի անձնական համարը մուտքագրե՛ք համապատասխան որոնողական դաշտում (Տեսե՛ք՝ Սխեմա N2. Ստուգման սարքի մեջ ընտրողի տվյալները ձեռքով որոնելու նկարագրդում)։
- Սուգման սարքը անձը հաստատող վկայականում եղած հաշվառման տվյալները համեմատում է սարքի մեջ ներբեռնված ընտրողների ցուցակում առկա տվյալների հետ և համապատասխանության դեպքում սարքն էկրանի վրա բացում է այս ընտրողի տվյալները։



Հաշվառման տվյալների համապատասխանության հաստատման դեպքում ցուցակի մեջ ընդգրկված ընտրողի մասին տեղեկությունները ստուգման սարքի էկրանին հայտնվելու նկարագրդում

Հիշե՛ք։

Եթե ստուգող սարքի կողմից ընտրողի տվյալների համապատասխանությունը ստուգելիս հաստատվի, որ ներկայացված փաստաթղթում տվյալ ընտրողի գրանցման տվյալները (բացառությամբ լուսանկարի) համապատասխանում են ընտրողների ստուգման սարքում ներբեռնած ընտրողների ցուցակում առկա տվյալներին, սակայն այս ընտրողի դեմքը և ներկայացված փաստաթղթի լուսանկարը միմյանց անհամապատասխան համարեք, տվյալ անհամապատասխանությունը

հաստատելու համար դիմե՛ք հանձնաժողովի նախագահին և սպասե՛ք նրա ցուցումներին: Եթե հանձնաժողովի նախագահը չհաստատի տվյալ անհամապատասխանությունը, իրավունք ունեք քվեարկության օրվա գործավարության մատյանում գրել Ձեր առանձնահատուկ կարծիքը, ինչը հաստատում եք հանձնաժողովի քարտուղարի հետ: Չնայած ներկայացված անձը հաստատող փաստաթղթում առկա լուսանկարի հետ ընտրողի դեմքն անհամապատասխան համարելուն, ընտրողը մասնակցում է քվեարկությանը:

- Ստուգման սարքի կողմից ընտրողի տվյալների համապատասխանության հաստատման դեպքում կատարե՛ք ընտրողի նշմարում աջ ձեռքի բթամատի կամ ցուցամատի եղունգի վրա, իսկ եթե նշված գործողությունը հնարավոր չէ կատարել, ապա՝ աջ ձեռքի մյուս մատների վրա, իսկ եթե դա ևս հնարավոր չէ, ապա՝ նույն կերպ ձախ ձեռքի վրա):

Հիշե՛ք:

Նշմարման ընթացակարգ անցնելուց հրաժարվելու դեպքում, ընտրողն իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը: Բացատրե՛ք նրան մերժելու պատճառը և խնդրե՛ք լքել քվեարկության շենքը:

Ընտրողը, որը չունի վերին վերջույթներ («ֆիզիկական վիճակ»), չի անցնում նշմարման ընթացակարգ:

- Նշմարման ընթացակարգը կատարելուց հետո ստուգման սարքից տպե՛ք ընտրողի ստուգումը հավաստող կտրոն, որի վրա համապատասխան դաշտում ստորագրում է ընտրողը:

Հիշե՛ք։

Այն ընտրողի ստուգումը հաստատող կտրոնի վրա, որը չունի վերին վերջույթներ («ֆիզիկական վիճակ»), ընտրողի ստորագրության տեղում արե՛ք գրառում «ֆիզիկական վիճակ» և նշվածը հաստատե՛ք Ձեր ստորագրությամբ։

Տեսողությունից զուրկ և տեսողության խնդիր ունեցող ընտրողին բանավոր բացատրե՛ք իրականացվելիք ընթացակարգերը։ Ձեռքով ցո՛ւյց տվեք ստուգումը հաստատող կտրոնի վրա ստորագրության տեղը։

- Ստորագրած կտրոնը զետեղե՛ք գրանցման սեղանի վրա դրված անթափանց կապարակնքված տուփի մեջ։

Ընտրողի ստուգումը հաստատող կտրոն տպելը

Կտրոնի վրա ընտրողի կողմից ստորագրելը

Կտրոնի զետեղումը անթափանց կապարակնքված տուփի մեջ

Հիշե՛ք։

Եթե ստուգման սարքից չի տպվի ընտրողի ստուգումը հաստատող կտրոն կամ կտպվի տեխնիկական խոտանով, դիմե՛ք հանձնաժողովի նախագահին։ Ընտրողը ստուգումը հաստատող կտրոնի փոխարեն ստորագրում է ընտրողի ստուգումը հաստատող ակտը, որի ձևաթուղթը լրացնում է հանձնաժողովի քարտուղարը։ Ընտրողի կողմից ստորագրված ակտը զետեղե՛ք ստուգումը հաստատող կտրոնների համար հատկացված տուփի մեջ։

Ընտրողների գրանցման գործընթացում ռիսկերի կանխարգելումը

{I} Եթե ստուգող սարքը արձանագրի, որ քվեարկության շենք քվեարկելու համար ներկայացած ընտրողը ներառված է շարժական քվեատուփի ցուցակում, համապատասխան տեղեկությունը հայտնվում է սարքի էկրանին, միաժամանակ սարքը ձայնային ազդանշան է արձակում:

Ընտրողին կարգելվի քվեարկել ընտրատեղամասում: Ընտրողին բացատրե՛ք, որ համաձայն պահանջի, ընտրողի համար նախատեսված է շարժական քվեատուփով քվեարկության ծառայություն:

Շարժական քվեատուփի ցուցակում ներառված ընտրողի մասին տեղեկությունը սարքի էկրանին հայտնվելու նկարագարդում

{II} Եթե ստուգող սարքը արձանագրի, որ քվեարկության շենք քվեարկելու համար ներկայացած ընտրողն ընդգրկված է մեկ այլ տեղամասի համար հատկացված հատուկ ցուցակում, համապատասխան տեղեկությունը հայտնվում է սարքի էկրանին, միևնույն ժամանակ սարքը ձայնային ազդանշան է արձակում: Ընտրողին արգելվում է ընտրատեղամասում մասնակցել քվեարկությանը: Ընտրողին բացատրե՛ք, որ քվեարկությանը մասնակցելու համար նա պետք է գնա համապատասխան ընտրատեղամաս: Ընտրողին տրամադրե՛ք տեղամասի համարը և հասցեն՝ ստուգող սարքի էկրանին հայտնված տեղեկության հիման վրա:



Այլ ընտրատեղամասի համար հատկացված հատուկ ցուցակում ընդգրկված ընտրողի մասին տեղեկությունը ստուգման սարքի էկրանին հայտնվելու նկարագարդում

{III} Եթե ստուգող սարքն արձանագրում է, որ քվեարկության շենք քվեարկելու համար ներկայացած ընտրողն արդեն ստուգված է այս ընտրական տեղամասում, սարքի էկրանին հայտնվում է համապատասխան տեղեկությունը, միևնույն ժամանակ սարքը ձայնային ազդանշան է արձակում: Ընտրողին կարգելվի ընտրատեղամասում մասնակցել քվեարկության: Ընտրողին բացատրե՛ք, որ պետք է լքի քվեարկության շենքը:

Երկակի ստուգման փորձի մասին տեղեկությունը ստուգման սարքի էկրանին հայտնվելու նկարագրությունը

Ընտրողներին քվեաթերթիկներ տրամադրելու ընթացակարգը.

- Ընտրողների գրանցման ընթացակարգն ավարտելուց հետո ընտրողին բացատրե՛ք քվեաթերթիկը լրացնելու և հատուկ շրջանակ-ծրարն օգտագործելու կարգը:

«Քվեարկելու համար քվեաթերթիկում ամբողջովին գունավորե՛ք Ձեր ցանկալի միայն մեկ սուբյեկտի անվան դեմ եղած շրջանը: Քվեաթերթիկը չծալե՛ք և լրացված քվեաթերթիկը տեղադրե՛ք հատուկ շրջանակ-ծրարի մեջ՝ ընտրության գաղտնիության նպատակով»:

- Քվեաթերթիկը լրացնելու և հատուկ շրջանակ-ծրարի օգտագործման կարգը բացատրելուց հետո քվեաթերթիկն այնպես տեղադրե՛ք հատուկ շրջանակ-ծրարի մեջ, որպեսզի այն ամբողջությամբ ծածկի ընտրական սուբյեկտների ցանկը:
- Ընտրողին ցուցո՛ւմ տվեք, որ հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկի վերին մասում գունավորի փորձնական շրջանը:



Հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկի վերին մասում գտնվող փորձնական շրջանը

Ուշադրությո՛ւն.
Տեսողությունից զուրկ և տեսողության խնդիր ունեցող ընտրողին տեղեկություն տրամադրե՛ք քվեաթերթիկում ընտրական սուբյեկտների հերթականության մասին և բացատրե՛ք հատուկ շրջանակ/ձևի օգտագործման և քվեաթերթիկը լրացնելու կարգը: Տեսողությունից զուրկ և տեսողության խնդիր ունեցող ընտրողին քվեաթերթիկն այնպես փոխանցե՛ք, որ այն զետեղված լինի քվեաթերթիկը լրացնելու հատուկ շրջանակ/ձևի մեջ: Քվեաթերթիկը լրացնելու համար նախատեսված շրջանակի/ձևի յուրաքանչյուր շրջանաձև կտրվածք պետք է համընկնի քվեաթերթիկում ընդգրկված ընտրական սուբյեկտների հերթական համարների դիմաց եղած շրջանին: Տեսողությունից զուրկ և տեսողության խնդիր ունեցող ընտրողին գունավորե՛լ տվեք նույն քվեաթերթիկի վրա հատուկ առանձնացված տեղում առկա փորձնական շրջանը:
Տեսողության խնդիր ունեցող ընտրողին առաջարկե՛ք խոշորացնող ոսպնյակ և բացատրե՛ք դրա օգտագործման կարգը:

- Ընտրողին փոխանցե՛ք հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկը և բացատրե՛ք նրան, որ քվեաթերթիկը հատուկ շրջանակ-ծրարի միջոցով հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի մեջ պետք է տեղադրի այնպես, որ քվեաթերթիկի այն մասը, որի վրա գտնվում է փորձնական շրջանը, հայտնվի ներքևում: Դրանից հետո ընտրողին ուղղորդե՛ք, որ տեղափոխվի գաղտնի քվեարկության խցիկ:

Ուշադրությո՛ւն.
Առանց ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերի քվեարկության գործընթացը շարունակելու դեպքում, ընտրողի համար փոխվում է միայն հիմնական քվեատուփի մեջ քվեաթերթիկը զետեղելու ընթացակարգը: Համապատասխանաբար, ընտրողին բացատրե՛ք քվեաթերթիկը լրացնելու և հիմնական քվեատուփի մեջ զետեղելու կարգը.

«Քվեարկելու համար քվեաթերթիկում ամբողջովին գունավորե՛ք Ձեր ցանկալի միայն մեկ սուբյեկտի անվան դեմ եղած շրջանը: Քվեաթերթիկն այնպես ծալե՛ք, որ չերևա, թե ում եք տվել ձայն: Քվեաթերթիկը ծալված վիճակում զետեղե՛ք հիմնական քվեատուփի մեջ»:

Գրանցում իրականացնողի հետ կապված այլ հարցեր

I. Ընտրողների անձնական տվյալների պաշտպանության ապահովումը

Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց արգելվում է մշակել (այդ թվում, լուսանկարահանել, հավաքել, ձայնագրել, պահել), օգտագործել, երևակել, փոխանցել և/կամ տարածել ստուգող սարքերում ներբեռնված ընտրողների ցուցակում առկա անձնական տվյալները: Նշված արգելքը տարածվում է նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրողի անձնական տվյալների հետ կապված գործողությունների իրականացումն անհրաժեշտ է «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքով և ԿԸՀ իրավական ակտերով նախատեսված տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորություններն իրականացնելու համար:

Ընտրողների անձնական տվյալների պաշտպանությունն ապահովելու համար սահմանված կանոնները խախտելու դեպքում արձագանքելու համար դիմե՛ք հանձնաժողովի նախագահին:

II. Քվեարկությանը/ընտրություններին մասնակցող ընտրողների հաշվառումը

Քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը (ընտրողների ակտիվությունը) որոշելու նպատակով տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի ցուցումով գրանցում իրականացնողներից որևէ մեկը ընտրողների ստուգման սարքից ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին, 17:00-ին տպում է ընտրողների մասնակցությունն արտացոլող կտրոն/հաշվետվություն:

Քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թվաքանակը ցույց տվող վերջնական կտրոնը/հաշվետվությունը տպվում է քվեարկության գործընթացի ավարտից հետո:

Տեսե՛ք՝ Սխեման N3. Ընտրողների թիվը (ակտիվությունը) արտացոլող կտրոնը/հաշվետվությունը տպելու գործընթացի նկարագրությունը:

Սխեմա N1. Սարքից ընտրողների ցուցակը տպելու գործընթացի նկարագրադրում

{I}

Ընտրողների ցուցակը տպելու մենյու տեղափոխվելու համար գրանցում իրականացնողը սեղմում է «Վերադառնալ մենյու» կոճակը:



{II}

Գրանցում իրականացնողը մենյուի մեջ սեղմում է «Ընտրողների ցուցակ» կոճակը:



{III}

Գրանցում իրականացնողը սեղմում է «Տպել» կոճակը և արդյունքում տպվում է ընտրողների ցուցակը:

Սխեմա N2. Ստուգման սարքում ընտրողի տվյալները ձեռքով որոնելու նկարագրադրում

Ուշադրությո՛ւն.
Ստուգման սարքում ընտրողի տվյալները ձեռքով որոնելու գործառույթ կիրառելու դեպքում գրանցում իրականացնողը պետք է համոզվի, որ իր կողմից սարքի որոնման դաշտում մուտքագրված ընտրողի անձնական համարը համապատասխանում է ընտրողի անձը հաստատող փաստաթղթում նշված անձնական համարին, և միայն դրանից հետո օգտագործի «Որոնել» կոճակը:

Սխեմա N3. Ընտրողների թիվը (ակտիվությունը) արտացոլող կտրոնը/հաշվետվությունը տպելու գործընթացի նկարագրություն



{I}
Ընտրողների ակտիվության տպման մենյու անցնելու համար գրանցում իրականացնողը սեղմում է էկրանի վերին աջ անկյունում գտնվող մենյուն



{II}
Գրանցում իրականացնողը մենյուի մեջ սեղմում է «Ընտրողների ակտիվություն» կոճակը:



{III}
Գրանցում իրականացնողը սեղմում է «Ակտիվության կտրոնի տպում» և արդյունքում տպվում է ընտրողների ակտիվությունն արտացոլող կտրոն:

Հուշաթերթ ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամի համար

Օգտագործվում է քվեարկությունը առանց ընտրողների ստուգման սարքի շարունակելու դեպքում:

Առանց ստուգման սարքերի ընտրողներին քվեարկությանը մասնակցության ծառայություն իրականացնելու համար տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն ապահովում է քվեարկության շենքում աշխատանքային միջավայրի համապատասխան հարմարեցում.

- Ընտրողների ստուգման սարքերը փոխարինում է ընտրական հանձնաժողովի համար հատկացված ընտրացուցակներով, Ձեզ փոխանցում է այբբենական կարգով բաժանված ընտրողների միասնական ցուցակ (սեղանի ցուցակ՝ լուսանկարներով) և գրանցում իրականացնողի քանոն: Գրանցողներից մեկին փոխանցվում է նաև ընտրողների հատուկ ցուցակ (այդպիսինի առկայության դեպքում):
- Հանձնաժողովի նախագահի ցուցումով գրանցման սեղանների մոտ գրանցում իրականացնողները փակցնում են փոխանցված ցուցակին համապատասխան ընտրողների հերթական համարների և ազգանունների այբբենական հաջորդականությունը:

I. Ընտրողի գրանցման ընթացակարգը.

- Ընտրողին խնդրե՛ք ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ: Ընտրողը քվեարկությանը մասնակցում է, եթե ներկայացնում է անձը հաստատող փաստաթղթերից որևէ մեկը.
  - ✓ Վրաստանի քաղաքացու անձը հաստատող էլեկտրոնային վկայական,
  - ✓ Վրաստանի քաղաքացու անձը հաստատող ոչ էլեկտրոնային վկայական (որը չունի տեղեկությունների էլեկտրոնային կրիչ),
  - ✓ Վրաստանի քաղաքացու անձնագիր:

- Ստուգե՛ք անձը հաստատող փաստաթղթի գործողության ժամկետը: Վրաստանի քաղաքացու անձը հաստատող ոչ էլեկտրոնային վկայականի ներկայացման դեպքում, ստուգե՛ք փաստաթղթի տրման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը:

Ուշադրություն.
Եթե ընտրողը ներկայացնում է ժամկետանց անձը հաստատող փաստաթուղթ կամ ուժը կորցրած Վրաստանի քաղաքացու անձը հաստատող ոչ էլեկտրոնային վկայական (ուժը կորցրած է մինչև 2011 թվականի հուլիսի 27-ը ներառյալ տրված ոչ էլեկտրոնային վկայականը), նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը: Ընտրողին բացատրե՛ք քվեարկությանը մասնակցելը մերժելու հիմքը և նշե՛ք, որ նրան քվեարկությանը մասնակցելու իրավունք կտրվի, եթե նա ներկայացնի գործող անձը հաստատող փաստաթուղթ:

- Ստուգե՛ք, թե արդյոք ընտրողը ընդգրկված է միասնական կամ հատուկ ընտրացուցակում և համեմատե՛ք ընտրողի անձնական համարը ընտրացուցակի համարի հետ:
- Ստուգե՛ք ներկայացված փաստաթղթում նշված ընտրողների գրանցման տվյալներին և ընտրողների ցուցակի տվյալների համապատասխանությունը.

Հիշե՛ք:
Ընտրողը մասնակցում է քվեարկությանը, եթե ընտրողների համապատասխան ցուցակում Վրաստանի քաղաքացու անձնական համարի, սեռի և լուսանկարի հետ մեկտեղ լիովին համապատասխանում են ստորև թվարկված տվյալներից առնվազն 3-ը.

✓ անունը,

✓ ազգանունը,

✓ ծննդյան ամսաթիվը (ամսաթիվ, ամիս, տարեթիվ),

✓ հասցեն (ըստ Վրաստանի քաղաքացու անձը հաստատող վկայականի կամ Գործակալության տվյալների բազայի, որը ներառում է նաև արտասահմանում հաշվառման վայրը):

- Ստուգե՛ք ներկայացված փաստաթղթում առկա լուսանկարի և ընտրողի դեմքի համապատասխանությունն իրար:

Հիշե՛ք։
Եթե ընտրողի տվյալների համապատասխանությունը ստուգելիս հաստատվի, որ ներկայացված փաստաթղթում տվյալ ընտրողի գրանցման տվյալները (բացառությամբ լուսանկարի) համապատասխանում են ընտրողների ստուգման սարքում ներբեռնած ընտրողների ցուցակում առկա տվյալներին, սակայն այս ընտրողի դեմքը և ներկայացված փաստաթղթի լուսանկարը միմյանց անհամապատասխան համարեք, դիմե՛ք տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին և սպասե՛ք նրա ցուցումներին։ Եթե հանձնաժողովի նախագահը չհաստատի տվյալ անհամապատասխանությունը, իրավունք ունեք քվեարկության օրվա գործավարության մատյանում գրել Ձեր առանձնահատուկ կարծիքը, ինչը հանձնաժողովի քարտուղարի հետ հաստատում եք ստորագրությամբ։ Չնայած ներկայացված անձը հաստատող փաստաթղթում առկա լուսանկարի հետ ընտրողի դեմքն անհամապատասխան համարելուն, ընտրողը մասնակցում է քվեարկությանը։

- Ստուգման սարքի կողմից ընտրողի տվյալների համապատասխանության հաստատման դեպքում կատարե՛ք նշմարում ընտրողի աջ ձեռքի բթամատի կամ ցուցամատի եղունգի վրա, եթե նշված գործողությունը հնարավոր չէ կատարել, ապա՝ աջ ձեռքի մյուս մատների վրա, իսկ եթե դա ևս հնարավոր չէ, ապա՝ նույն կերպ ձախ ձեռքի վրա։

Հիշե՛ք։
Նշմարման ընթացակարգ անցնելուց հրաժարվելու դեպքում, ընտրողն իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը։ Ընտրողին բացատրե՛ք մերժելու պատճառը և խնդրե՛ք, որ լքի քվեարկության շենքը։

- Նշմարման ընթացակարգն իրականացնելուց հետո ստորագրե՛ք ընտրողների միասնական ցուցակի համապատասխան այունակում և ընտրողին ցուցո՛ւմ տվեք ստորագրությամբ հաստատել քվեաթերթիկը ստանալը։

Հիշե՛ք։
Այն ընտրողի ազգանվան երկայնքով, որը չունի վերին վերջույթներ («ֆիզիկական վիճակ»), արե՛ք գրառում «ֆիզիկական վիճակ» և նշվածը վավերացրե՛ք Ձեր ստորագրությամբ։

Տեսողությունից զուրկ և տեսողության խնդիր ունեցող ընտրողին բանավոր բացատրե՛ք իրականացվելիք ընթացակարգերը։ Ձեռքով ցո՛ւյց տվեք ստուգումը հաստատող կտրոնի վրա ստորագրության տեղը։

Ընտրողի գրանցման գործընթացում ռիսկերի կանխարգելումը

{I} Եթե քվեարկության ընթացքում պարզվի, որ ընտրողը ընտրացուցակում ստորագրել է այլ ընտրողի ազգանվան երկայնքով գտնվող սյունակում, նման դեպքում ընտրողը, որի ազգանվան դիմաց արձանագրված է ստորագրությունը, պետք է ստորագրի նույն սյունակում։ Նշվածի վերաբերյալ պետք է բացատրագիր գրեք (ընտրողների միասնական ցուցակում ընտրողի համարի, անվան և ազգանվան մատնանշմամբ)։

{II} Եթե արձանագրվի, որ քվեարկության շենք քվեարկելու համար ներկայացած ընտրողն ընդգրկված է մեկ այլ տեղամասի համար հատկացված հատուկ ցուցակում, ընտրողին արգելվում է ընտրատեղամասում մասնակցել քվեարկությանը։ Ընտրողին բացատրե՛ք, որ քվեարկությանը մասնակցելու համար նա պետք է գնա համապատասխան ընտրատեղամաս։

{III} Եթե արձանագրվի, որ քվեարկության շենք քվեարկելու համար ներկայացած ընտրողը ներառված է շարժական քվեատուփի ցուցակում, նման ընտրողին արգելվում է քվեարկել ընտրատեղամասում։ Ընտրողին բացատրե՛ք, որ համաձայն պահանջի, ընտրողի համար նախատեսված է շարժական քվեատուփով քվեարկության ծառայություն։

II. Ընտրողին քվեաթերթիկ տրամադրելու ընթացակարգը.

- Ընտրողների ստուգման/գրանցման ընթացակարգն ավարտելուց հետո ընտրողին բացատրե՛ք քվեաթերթիկը լրացնելու և հատուկ շրջանակ-ծրարն օգտագործելու կարգը.

«Քվեարկելու համար քվեաթերթիկում ամբողջովին գունավորե՛ք Ձեր ցանկալի միայն մեկ սուբյեկտի անվան դեմ եղած շրջանը: Քվեաթերթիկը չծալե՛ք և լրացված քվեաթերթիկը տեղադրե՛ք հատուկ շրջանակ-ծրարի մեջ՝ ընտրության գաղտնիության նպատակով»:

- Քվեաթերթիկը լրացնելու և հատուկ շրջանակ-ծրարի օգտագործման կարգը բացատրելուց հետո քվեաթերթիկն այնպես տեղադրե՛ք հատուկ շրջանակ-ծրարի մեջ, որպեսզի այն ամբողջությամբ ծածկի ընտրական սուբյեկտների ցանկը:
- Ընտրողին ցուցո՛ւմ տվեք, որ հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկի վերին մասում գունավորի փորձնական շրջանը:



Հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկի վերին մասում գտնվող փորձնական շրջանը

Ուշադրությո՛ւն.
Տեսողությունից զուրկ և տեսողության խնդիր ունեցող ընտրողին տեղեկություն տրամադրե՛ք քվեաթերթիկում ընտրական սուբյեկտների հերթականության մասին և բացատրե՛ք հատուկ շրջանակ/ձևի օգտագործման և քվեաթերթիկը լրացնելու կարգը: Տեսողությունից զուրկ և տեսողության խնդիր ունեցող ընտրողին քվեաթերթիկն այնպես փոխանցե՛ք, որ այն զետեղված լինի քվեաթերթիկը լրացնելու հատուկ շրջանակ/ձևի մեջ: Քվեաթերթիկը լրացնելու համար նախատեսված շրջանակի/ձևի յուրաքանչյուր շրջանաձև կտրվածք պետք է համընկնի քվեաթերթիկում ընդգրկված ընտրական սուբյեկտների հերթական համարների դիմաց եղած շրջանին: Տեսողությունից զուրկ և տեսողության խնդիր ունեցող ընտրողին գունավորե՛լ տվեք նույն քվեաթերթիկի վրա հատուկ առանձնացված տեղում առկա փորձնական շրջանը:

Տեսողության խնդիր ունեցող ընտրողին առաջարկե՛ք խոշորացնող ոսպնյակ և բացատրե՛ք նրա օգտագործման կարգը:

- Ընտրողին փոխանցե՛ք հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղված քվեաթերթիկը և բացատրե՛ք նրան, որ քվեաթերթիկը հատուկ շրջանակ-ծրարի միջոցով հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի մեջ պետք է այնպես ներմուծի, որ քվեաթերթիկի այն մասը, որի վրա գտնվում է փորձնական շրջանը, հայտնվի ներքևում: Դրանից հետո ընտրողին ուղղորդե՛ք, որ տեղափոխվի գաղտնի քվեարկության խցիկ:

Ուշադրությո՛ւն

Առանց ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերի քվեարկության գործընթացը շարունակելու դեպքում, ընտրողի համար փոխվում է միայն հիմական քվեատուփի մեջ քվեաթերթիկը զետեղելու ընթացակարգը: Համապատասխանաբար, ընտրողին բացատրե՛ք քվեաթերթիկը լրացնելու և հիմական քվեատուփի մեջ զետեղելու կարգը.

«Քվեարկելու համար քվեաթերթիկում ամբողջովին գունավորե՛ք Ձեր ցանկալի միայն մեկ սուբյեկտի անվան դեմ եղած շրջանը: Քվեաթերթիկն այնպես ծալե՛ք, որ չերևա, թե ում եք տվել ձայն: Քվեաթերթիկը ծալված վիճակում զետեղե՛ք հիմական քվեատուփի մեջ»:

Գրանցում իրականացնողի գործառույթների հետ կապված այլ հարցեր

I. Ընտրողների անձնական տվյալների պաշտպանության ապահովումը

Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց արգելվում է մշակել (այդ թվում, լուսանկարահանել, հավաքել, ձայնագրել, պահել), օգտագործել, երևակել, փոխանցել և/կամ տարածել ստուգող սարքերում ներբեռնված ընտրողների ցուցակում առկա անձնական տվյալները: Նշված արգելքը տարածվում է նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրողի անձնական տվյալների հետ կապված գործողությունների իրականացումն անհրաժեշտ է «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքով և ԿԸՀ իրավական ակտերով նախատեսված տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորություններն իրականացնելու համար:

Ընտրողների անձնական տվյալների պաշտպանությունն ապահովելու համար սահմանված կանոնները խախտվելու դեպքում արձագանքման համար դիմե՛ք հանձնաժողովի նախագահին:

II. Քվեարկությանը/ընտրություններին մասնակցող ընտրողների հաշվառումը

Քվեարկությանը/ընտրություններին մասնակցող ընտրողների թիվը (ընտրողների ակտիվությունը) որոշվում է ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին, 17:00-ին: Քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թվաքանակը որոշվում է քվեարկության գործընթացի ավարտից հետո:

Քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը (ընտրողների ակտիվությունը) որոշելու նպատակով տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի ցուցումով առանց քվեարկության գործընթացին խանգարելու, ինչպես նաև գործառույթի ժամանակավոր փոխանցման դեպքում, հաշվե՛ք ընտրացուցակներում ընտրողների ստորագրությունների թիվը (Ձեր կողմից գրված բացատրություններում նշված տվյալների նախատեսմամբ), նաև Ձեր կողմից տրված քվեաթերթիկների թիվը (ներառյալ հանձնաժողովի նախագահին փոխանցված վնասված քվեաթերթիկների թիվը): Տրված քվեաթերթիկների թիվը կարելի է որոշել՝ համեմատելով հանձնաժողովի նախագահից ստացված քվեաթերթիկների թիվը Ձեզ մոտ մնացած քվեաթերթիկների թվի հետ:

Եթե տվյալների միջև տարբերություն բացահայտվի, անհապաղ բացատրագիր գրե՛ք (դրանում արտացոլված տվյալները նախատեսվում են քվեարկության/ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը որոշելու և քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություն կազմելու նպատակով):